JOURNAL ARMÉNIEN
MANZOUMÉI-EFKIAR
38, Grand' Rue de la S-Porte, 38
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԵՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Գալաթա Սէյ Ճատտէսի, 38
Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր։

# Մանզումէի Էֆքեար

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افكار
ارمنیجه یومی سیاسی غزته‌در
صاحب امتیازی : اوحانس فرید
اداره خانه‌سی : باب عالی جاده‌سنده نومرو ۲۸

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 80 ղր. | 50 ղր. |
| Գաւառներու համար | 108 » | 60 » |
| Արտասահմանի համար | 25 ֆր. | 13 ֆ. |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 ղրուշ,
Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ։

10 ՓԱՐԱ — "ՄԱՆԶՈՒՄԷ„ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ — 10 ՓԱՐԱ

## ՔԱՍԻՄԻ ՆՈՐ ՎԷՊԸ

ՄՕՏ ՕՐԷՆ պիտի սկսինք հրատարակել ՔԱՍԻՄԻ մէկ նոր վէպը, քաղուած մեր ՏՈՀՄԱՅԻՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ։

Քաջայայտ ենք որ ամէն հասակէ ընթերցողներ սիրով պիտի կարդան այս նոր վէպը, որ ժողովրդային հեղինակին մինչեւ ցարդ գրածներուն ամէնէն գերազանցը պիտի ըլլայ։

Գաւառացին ու Պոլսեցին, հարուստին սալոնը ու աղքատին տնակը, հաւասարապէս տեղ պիտի ունենան այս նոր վէպին մէջ, որ ընտանեկան խիստ հետաքրքրաշարժ ու խորհրդաւոր հանգոյցի մը շուրջը կը դառնայ։

Աւելորդ կը սեպենք յանձնարարել անոր ընթերցումը, քանի որ վստահ ենք թէ չպիտի գտնուի մէկը որ չուզէ կարդալ իր կեանքէն քաղուած զուարճալի եւ բարոյացուցիչ այս վէպը, որ ձմրան գիշերներու համար սփոփիչ ժամանց մը պիտի առթէ։

*ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Փորձով տեսած ըլլալով որ շատեր վէպին սկսելէն ետք կը փափաքին թերթ առնել, և առաջին թիւէն կը պահանջեն, ինչ որ մեծ դժուարութիւն կը պատճառէ թերթիս, հիմակուընէ կը յանձնարարենք որ այս անախորժութեանց առաջքը առնելու համար պէտք է փութան վէպին սկիզբէն բաժանորդագրուիլ «Մանզումէ»ի, եթէ կ'ուզեն կարդալ*

### ՔԱՍԻՄԻ ՆՈՐ ՎԷՊԸ
### ՏՈՀՄԱՅԻՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՔԱՂՈՒԱԾ

ՕՐՈՒԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

## ՎԱՃԱՌԱՏԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ՀԱՍՑԷԻՆ

## ՃԱՆՃԻՐՈՐ ԴԻՄՔԵՐ

ՏՕՄԻՆՕ

Մեր Դ. էջին մէջ հրատարակած ենք այսօր նոր աշխատակցի մը, Պրն. Հրանտ Ազնաւուրի մէկ նորավէպը, — գաւառիկ կեանքէ փրցուած, — ուր պարզութիւն եւ նկարագեղ ոճեր միացած են զաւկի մը վեհ անձնուիրութիւնը տարփողելու։

# ԿԻԼԻԿԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
# Տ. Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
## Եւ
## "ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԷԱՐ„

Ն. Ամենապատուութեան բարեդէպ ընտրութեան առթիւ, «Մանզումէ» շնորհաւորական հեռագիր մը ուղղած էր Երուսաղէմ։ Երէկ իրիկուն հետեւեալ հեռագրական պատասխանը ստացանք.

*Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄ, 23 Հոկտ. 1902, չորեք, ժամ 10*

*Կ. Պոլիս, «Մանզումէի Էֆքեար» լրագրոյ Տէր և Տնօրէն*

ՊԱՏՈՒԵԼԻԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻՒՆ

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՈՒԵԼՈՒՍ ԱՌԹԻՒ ՁԵՐ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՍ ԿԸ ՅԱՅՏՆԵՄ ԵՒ ՅԱՐԱՏԵՒ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՄԱՂԹԵՄ «ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԵԱՐ»Ի։

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿ

Ն. Ամենապատուութեան, Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին այս ճաշակաւոր հեռագիրը խնդութեամբ լեցուց սիրտը «Մանզումէ»ի բոլոր աշխատաւորներուն, որոնք կար եւ կարողութիւն կը մաղթեն Կիլիկիոյ Աթոռին Արժանընտիր Հայրապետին։

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

## ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՐԷԿՈՒԱՆ ՆԻՍՏԸ

Խառն Ժողովը երէկ առտու գումարուեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տիգրան էֆ. Եուսուֆեանի։ Ներկայ էին Տ. Գաբրիէլ Եպիս. Ճէվահիրճեան, Շահպազեան, Խանճեան և Սանտալճեան Աւագ քահանաները, Խտըրեան Գրիգոր, Տ. Ներսէսեան Տիգրան, Տէմիրճիպաշեան Սեպուհ և Գարակէօզեան Գրիգոր էֆէնտիները։

Ինչպէս որ ծանուցինք, Ս. Պատրիարք Հայրը ժողովին ներկայացուց Կիլիկիոյ Տ. Սահակ Կաթողիկոսին ընտրութեան վերաբերեալ Տեղեկագիրները, նաեւ Ընտրողական Ժողովին Ուղերձը, որով շնորհակալութիւն կը յայտնուի նախ Վեհ. Կայսեր, և ապա Վարչութեան և Ս. Պատրիարքին։ Ժողովը ուշադրութեամբ առաւ ընտրութեան տեղեկագիրը, և տեսնելով ընտրութեան ըստ օրինի կատարուած ըլլալը, հաստատեց զայն և ԱՄԵՆ. Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍԿ. ԽԱՊԱՅԵԱՆ հռչակուեցաւ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ. հետեւաբար, Խառն Ժողովը ընտրութեան արդիւնքն ու օրինաւորութիւնը Պատրիարքական Թագրիրով հաղորդելով Բ. Դրան, պիտի խնդրէ կաթողիկոսութեան յատուկ Արքունի

...

ԲԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ

BOURSE DE PARIS

7 Նոյեմ. 1902

| | | |
|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français) | 99 85 |
| Րէժի | (Tab. Turcs) | 352 — |
| Գօնսօլիտ. | (R. Turque D.) | 28 20 |
| Երկաթուղի | (Lots Turcs) | 121 75 |
| Պանք. Օթթ. | (Banque Ott.) | 594 — |
| Թրանսվալ | (Transvaal) | 143 |

ԱԶԴ. — Ըստ հրամանի Նորին Բարձր Սրբազնութեան Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, Գեր. Տ. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեան յառաջիկայ կիւրակէ 27 հոկտ. պիտի պատարագէ Ս. Եկեղեցւոյս մէջ վարժարանիս հոգատար անդամոց ննջեցելոց հոգւոց համար։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր — Ատենապետ

Կ. ՓԱՓԱԶԵԱՆ — Մ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

25 Հոկտ. 1902

Կէտիք-Փաշա

...

# ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

Առեւտրական հրապարակը որ բաւական ժամանակէ՝ ի վեր մաքրուած էր տուփախտական գործառնութիւններէ, այս օրերս դժբախտութիւն կ'ունենայ, կրկին զզուելի, քստմնելի տարրերու դատը հանդիսանալու։ Ոմն գառնիկ Փանոսեան, որ Թիւչիւք Եէնի խանի մէջ իբր թէ մանիֆաթուրաճիութիւն կընէ, վերէն վար չէնք չնորք «տօլանտըրմըշ» կընէ բիացան, ինչ որ ձեռքը անցնի ներս կը նետէ անգամ մ'ալ չտալու պայմանով ու 13 ոսկինոց պօնօի մը համար սնանկութիւն կը հռչակէ դատարանին առջեւ։ Այս Գառնիկը որ Միխայել Սթավրոփ քով ծառայ էր, առկէ 5 ամիս առաջ կը ձգէ գործը և ուղղակի ա'ս ու ա'ն խաբելու դրամ կողոպտելու նպատակով գործ մը կը բանայ։ դեռ սնանկանալէ հինգ օր առաջ 40 ոսկիի ապրանք Սէմերճիանէն և նոյնչափ ալ Ազիզ պէյէն կը գնէ կանխիկ վճարելու պայմանով ու երբ ապրանքը վաճառատուն կը ղրկեն ու դրամը կը պահանջեն, վաղը մեկալնօր ըսելով կոկսի խաբխբելու փոխարէնը չվճարել. վերջապէս գանձելու համար պօնօ մը կը խլէ վաճառականէ մը և յանձնակատար Մ. Զօլէնկերէն ալ

...

# ՈՂՈՂՈՒՄԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Ա.

Գիւղէն քիչ մը հեռու, ձորի մը կուրծքին վրայ, գօթ տուն մը կը բընակէին երեքը մէկ, էրիկ կնիկ ու պատուէ մը, —հարսին կեսուրը։

Անկեղծ ու խորունկ սէր մը այս երեք հոգիները զօդած էր իրարու. պառաւը մօր մը բոլոր սիրտովը կը սիրէր իր զաւակը, ու հարսն ալ իր խակ աղջկանը տեղը դրած էր. տանք ալ՝ էրիկ ու կնիկ, յորդանքով լեցուն սիրով կը գուրգուրային այդ բարի, խելօքիկ կնկանը վրայ, այն մեղամաղձիկ գուրգուրանքով, զոր կը տածէ մարդ չորնալու վրայ եղող տունկի մը կամ ալ նետուելու մօտ եղող առարկայի մը հանդէպ։

Հոս, աս խլխլկած տանը մէջ, որ իրենց ընտանիքին սրբանը եղած էր, երջանիկ էին անոնք, երջանկութիւն մը որուն հիմը այդ եռատանին էր. և որ կրնար վտանգուիլ եթէ երբեք անոնցմէ մէկը ծռէր։ Իրենք իրենց մէջ ամփոփուած, կեանքերուն էն խաղաղը ...

...

ուեցաւ իր չորս կողմը մռնչող, տարածուն հեղուկ մահուան մէջ։

Հայփաշ-Բաշը

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

# ՏԷՐ ԱՄՈՒՍԻՆ

(ՊԱՏԿԵՐ)

Տան մը հիւրասենեակին մէջ, երկու բարեկամուհիներ նստած են դէմ դէմի, մտերմօրէն. մէկը՝ Օր. Արսինէ Սահակեան, 19 տարու, բարձրահասակ ու նուրբ աղջիկ մը, գեղեցիկ ըլլալէ աւելի շատ սիրուն. իր դէմքին ժպտելիութեան կը միացնէ բաւական ալ զարգացած միտք մը։ Իսկ բարեկամուհին Օր. Հէրմինէ Գրիգորեան կ'ըսուի, 22 տարու, կոչտ գեղեցկու-

...

գգուանքներուս փոխարէն իր մգլոտած ոսկիներով ճոխ կեանքի մը պատրանքը պիտի ապահովէ ինծի. չէ՛, չէ՜... աս փորձանքը դրամի՛ն սիրոյն... տտանկ բան մը իր գլխուն բերելու համար մարդս անխե՛լք մը ըլլալու է։

ՇՈՒՇԱՆ

# ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

միմիայն «Մանզումէ»ի այն ընթերցողներուն յատուկ է, որոնք Թիւ 431էն սկսեալ թերթ կը գնեն։ Աշխարհաբար Նարեկը բացէն պիտի չծախուի։

# ԳԱՒԱՌԻ ԴԵՄՔԵՐ

ՀՕԳԱԲԱՐՁՈՒՆ

Ն. Պ.ԻՆ

Բանթալոն հագնի, «էնէշ ու ժագէթ. ու խելացի է ինք համայնագէտ, ինք ուսումնական.... լուրջ գլխի տէր է. շատ անցուդարձեր տեսեր դիտեր է։

Հպարտ, մինչև հպարտ կարծես աւանին, մարդոց ամէնէն է նա խելանին. քաղաքականճի կարդա լրագիր ու ի-

...

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գնդ. Տօքթ. Ալէքսանդր պէյ Աւրալեան, այս անգամ իր բնակութիւն հաստատած է Բերա, Թարլա Պաշի թիւ 121, ուր կը գտնուի ամէն օր, առաւօտ և երեկոյ, իսկ կէս օրվան միջոցները, ուրբաթ և կիրակի զատ, կը գտնուի Պահճէ-Գարու, Մինասեան գեղարանը։ 8–3

# ՍԱՐՐԱՖԻՅԷ

ԳԱԼԱԹԱ ՊՕՐՍԱՍԸ

| | |
|---|---|
| Էօհ. Օսմ. տիւն ագլ. գոր. | 30–09 |
| » » էն երեքշէք | 30–13 |
| » » էն աշխադը | 30–08½ |
| Ռումէլի չըմէն. ագլ. գընտ. | 116–7/8 |
| » » էն երեքշէք | 117–3/8 |
| » » էն աշխադը | 116–7/8 |
| **ՓԱՆՔԱ ԱՔՍԻՈՆԼԱՐԸ** | |
| Րէժի ագսիօնը Օս. լիր. | — |
| Սիկարէթ Ա. | 0–20 |
| » Բ. | —90 |
| Թրամվայ | 5–50 |
| Ժուրնանս | 1–35 |
| Օպլիկասիօն Թրամվայ | 196– |
| Ասիւրանս | 3–85 |
| Գօրբօրասիօն | 0–07 |
| Գօմմէրսիալ | 0–09 |
| Քրէտի Ֆօնսիէ Էժիբսիէն | 261– |
| Լօրիօս | 78– |
| Պանգ Նասիօնալ տը Կրէգ | 417– |
| Թրանսվալ | 140– |
| Րըխթըմ Թահվիլաթը | 196– |
| Անատօլը չըմ. ագսիօնը | 11–10 |
| **ԱԳՁԷԼԷՐԻՆ ՖԻՅԱԹԸ** | |
| Օսմ. լիրասը 100 ղշ. ... | [illegible] |
| Պէյազ մէճիտիյէ ֆարգը | 108–01 |
| Մէթալիք | 102–25 |
| Ինկլիզ լիրասը | 109–38 |
| Ֆրանսըզ ալթունը | 87–21 |
| Բօլ | 90– |
| Գրէմից ալթունը | 51–06 |
| Գարլօն գայմէսի | 8–63 |
| **ԵՎՐՕՊԱ ՊՕՐՍԱՍԸ** | |
| Լօնտրա 6 նոյեմբեր | |
| Ինկ. էսհամը Ինկ. լիրասը | 93–50 |
| Օսմ. էհսամը գարանտը | 27–87 |
| » » Բ | 54–75 |
| « » Գ | 30–87 |
| Օսմանլը Պանգասը | 13–63 |
| Մըսըր Տույ. մուլթազը տէ | 107–25 |
| Պուլկար իսթիգրազը | 93– |
| Գամպիօ Բարիզ 3 այ վադէ | 25–35 |
| Թրանսվալ | 5–68 |
| Շարթըրէթ | 3–18 |
| Պէրլին 6 նոյեմ. | |
| Ռումէլի չըմէնտըֆ. (մարգ) | 123–70 |
| Լօնտրա իւղէրինէ գամպիօ | 20–270 |
| Վիէննա 6 նոյեմ. | |
| Լօնտրա իւղէրինէ գամպիօ | 239–20 |
| Ռումէլի չըմէնտըֆէրի Ֆր. | 113–50 |
| Օսմանլը Րէժի ագսիօնը | 320– |
| Բարիզ 6 նոյեմ. | |
| Ֆրանս էսհ. 3%Ֆր. | 99–82 |
| Եէնի Օսմ. էսհամը գարանտը | 28–17 |
| Ռումէլի չըմէնտըֆէրի | 121–25 |
| Իթալիա էսհամը | 103–20 |
| Բուիօրիթէ Թիւրք | 593 |
| Օսմանիյէ | — |
| Տուտն Օթօման | 502– |
| Սրանեօլ | 86–95 |
| Թրանսվալ | 144– |
| Էժիբսիէն իւնիֆիէ | 109– |
| Զարթըրէթ | 82– |
| **ԳԱՄՊԻՕ** | |
| Լօնտրա | 109–15 |
| Բարիզ 3 այ վադէլի | 22–97½ |
| Ֆիօրէն Մանտա | 21–88 |

Տէր և Տնօրէն
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ